ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը	
Նստարանի համարը	

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է Ալեքսանդր Մակեդոնացին նվաճել Եգիպտոսը.

1) Ք. ա. 336 թ.
2) Ք. ա. 332 թ.
3) Ք. ա. 334 թ.
4) Ք. ա. 331 թ.

2 Ե՞րբ է Հուլիոս Կեսարն ընտրվել ցմահ դիկտատոր.

1) Ք. ա. 59 թ.
2) Ք. ա. 49 թ.
3) Ք. ա. 52 թ.
4) Ք. ա. 44 թ.

3 Ե՞րբ է տեղի ունեցել խաչակրաց երրորդ արշավանքը.

1) 1096-1099 թթ.
2) 1147-1149 թթ.
3) 1189-1192 թթ.
4) 1202-1204 թթ.

4 Ե՞րբ է Բյուզանդիայում հաստատվել Մակեդոնական արքայատունը.

1) 777 թ.
2) 867 թ.
3) 767 թ.
4) 877 թ.

5 Ե՞րբ է ընդունվել ԱՄՆ-ի Սահմանադրությունը.

1) 1791 թ.
2) 1776 թ.
3) 1802 թ.
4) 1787 թ.

6 Ե՞րբ է իր աշխատանքները սկսել Փարիզի խորհրդաժողովը.

1) 1918 թ. դեկտեմբերի 19-ի
2) 1920 թ. հոկտեմբերի 17-ին
3) 1919 թ. մայիսի 28-ին
4) 1919 թ. հունվարի 18-ին

7 **Ե՞րբ է Գերմանիան գրավել Հռենոսյան ապառազմականացված գոտին.**

1) 1937 թ.
2) 1939 թ.
3) 1936 թ.
4) 1938 թ.

8 **Ինչպե՞ս էր կոչվում ժողովրդական ժողովը Հին Սպարտայում.**

1) ապելլա
2) բուլե
3) էկլեսիա
4) գերուսիա

9 **Ո՞ր արքայի օրոք է Վաղ Ասորեստանի թագավորությունը հասել իր հզորության բարձրակետին.**

1) Թիգլաթպալասար I-ի
2) Շամշի-Ադդուի
3) Թուկուլթի-Նինուրտա I-ի
4) Սալմանասար I-ի

10 **Ո՞ր ճակատամարտում է զոհվել կայսր Վաղեսը.**

1) Ադրիանապոլսի
2) Կատալաունյան դաշտի
3) Կաննեի
4) Պուատիեի

11 **Ո՞վ է «Անառակ որդու վերադարձը» կտավի հեղինակը.**

1) Ռուբենսը
2) Ալբրեխտ Դյուրերը
3) Ռեմբրանդտը
4) Ռաֆայել Սանտին

12 **Ինչպե՞ս է կոչվում ամերիկյան սահմանադրության առաջին 10 փոփոխություններն ընդգրկող փաստաթուղթը.**

1) «Իրավունքների մասին օրենքներ»
2) «Համադաշնության հոդվածներ»
3) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»
4) «Իրավունքների օրենք»

13 **Ո՞ր ցարը վերացրեց ճորտությունը Ռուսաստանում.**

1) Ալեքսանդր I-ը
2) Ալեքսանդր II-ը
3) Նիկոլայ II- ը
4) Նիկոլայ I-ը

14 **Ինչպե՞ս է կոչվում Մոլդովայի մասը համարվող ինքնահռչակ պետությունը.**

1) Կոսովոյի Ինքնավարություն
2) Մերձդնեպրյան Հանրապետություն
3) Արևելամոլդովական Միություն
4) Մերձդնեստրյան Հանրապետություն

15 **Ո՞րն է «լիթուրգիա» բառի բացատրությունը.**

1) «վիճակահանություն»
2) «բողոքարկում»
3) «ընծայաբերում»
4) «վարձատրում»

16 **Ո՞րն է «դեկրետ» բառի բացատրությունը.**

1) քաղաքական կամ ղեկավար սկզբունք ԱՄՆ-ի կառավարման համակարգում:
2) Սահմանադրական որոշում Անգլիայում պժոտեկտորատի ժամանակ:
3) Կառավարության որոշում Ֆրանսիայում առաջին կայսրության տարիներին:
4) Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանությոն բարձրագույն մարմինների ընդունած օրենք:

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հռոմի գրավումը վեստգոթերի առաջնորդ Ալարիխի գլխավորությամբ
բ. Կայսր Մարկոս Ավրելիոսի կառավարման սկիզբը
գ. Նիկեայի ժողովը
դ. Կայսր Տրայանոսի կառավարման ավարտը

1) դ, բ, գ, ա
2) բ, գ, դ, ա
3) բ, գ, ա, դ
4) գ, ա, բ, դ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Անգլիայի արքա Հովհան Անհողինի գահակալման սկիզբը
բ. Գերմանիայի թագավոր Հենրիխ I-ի հաղթանակը հունգարների նկատմամբ
գ. Յարմուկ գետի ճակատամարտն արաբների և բյուզանդացիների միջև
դ. Վորմսի համաձայնագրի ստորագրումը

1) բ, ա, գ, դ
2) գ, դ, բ, ա
3) գ, բ, դ, ա
4) ա, դ, բ, գ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Փառահեղ հեղափոխությունը»Անգլիայում
բ. Անձի անձեռնմխելիության մասին օրենքի ընդունումը
գ. Անկախականների կողմից հանրապետության հռչակումը Անգլիայում
դ. «Կառավարման միջոց» սահմանադրության ընդունումը

1) բ, դ, գ, ա
2) բ, ա, դ, գ
3) գ, բ, դ, ա
4) գ, դ, բ, ա

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մուսսոլինիի կառավարության և Վատիկանի միջև փոխճանաչման պայմանագրի կնքումը
բ. Լեյբորիստների առաջին կառավարության ձևավորումն Անգլիայում Ռ. Մակդոնալդի վարչապետությամբ
գ. ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտի «Նոր կուրսի» ձևավորման սկիզբը
դ. «Բարգավաճման ժամանակաշրջանի» սկիզբը ԱՄՆ-ում

1) դ, գ, ա, բ
2) դ, բ, ա, գ
3) դ, բ, գ, ա
4) դ, ա, բ, գ

21 Ե՞րբ է Ասորեստանի Սարգոն II արքան գրավել Սամարիան.

1) Ք. ա. 727 թ.
2) Ք. ա. 729 թ.
3) Ք. ա. 720 թ.
4) Ք. ա. 714 թ.

22 Ե՞րբ է ձևավորվել Հռոմի պապի աշխարհիկ պետությունը Միջին Իտալիայում.

1) 776 թ.
2) 806 թ.
3) 786 թ.
4) 756 թ.

23 Ե՞րբ է Վիլհելմ Օրանցին հռչակվել Անգլիայի թագավոր.

1) 1689 թ.
2) 1679 թ.
3) 1688 թ.
4) 1690 թ.

24 Ե՞րբ է Իրանի շահը հրապարակել սահմանադրություն ընդունելու և մեջլիս հրավիրելու մասին հրովարտակը.

1) 1905 թ.
2) 1908 թ.
3) 1906 թ.
4) 1911 թ.

25 Ե՞րբ է Ֆրանսիան ճանաչել Ալժիրի անկախությունը.

1) 1969 թ.
2) 1972 թ.
3) 1991 թ.
4) 1962 թ

26 Ո՞վ էր Պելոպոնեսյան պատերազմների ժամանակ Աթենական նավատորմի սիցիլիական անհաջող արշավանքի կազմակերպիչը.

1) Նիկիասը
2) Պերիկլեսը
3) Դեմոսթենեսը
4) Ալկիվիադեսը

27 **Ո՞վ է փոխարինել Հռոմի առաջին կայսր Օգոստոսին.**

1) Տրայանոսը
2) Կլավդիոսը
3) Տիբերիոսը
4) Ներոնը

28 **Ո՞վ էր Բյուզանդիայի տապալված կայսրը, որին օգնելու պատրվակով կազմակերպվեց չորրորդ խաչակրաց արշավանքը.**

1) Միքայել VIII Պալեոլոգոսը
2) Իսահակ II Անգելոսը
3) Ալեքսիոս I Կոմնինոսը
4) Վասիլ II Բուլղարասպանը

29 **ԱՄՆ-ի ո՞ր նախագահի օրոք վերացվեց ստրկությունը.**

1) Թոմաս Ջեֆերսոնի
2) Թեոդոր Ռուզվելտի
3) Ջորջ Վաշինգտոնի
4) Աբրահամ Լինկոլնի

30 **Ի՞նչ անունով է հայտնի 2005թ. հեղափոխությունը Ղրղզստանում.**

1) «Նարնջագույն հեղափոխություն»
2) «Վարդերի հեղափոխություն»
3) «Կակաչների հեղափոխություն»
4) «Մեխակների հեղափոխություն»

31 **Ո՞րն էր Ջոսեր փարավոնի կառավարման գլխավոր հետևանքը.**

1) Ստեղծվեց կառավարման կուռ համակարգ և ամրապնդվեց միացյալ Եգիպտոսի թագավորությունը:
2) Միավորվեցիվ Վերին և Ստորին Եգիպտոսները:
3) Եգիպտոսի թագավորությունը խիստ թուլացավ և նվաճվեց լիբիացիների կողմից:
4) Որպես առանձին պետություն ձևավորվեց Ստորին Եգիպտոսը:

32 **Ի՞նչ հետևանք ունեցավ Իրանի նվաճումն արաբների կողմից.**

1) Բյուզանդական կայսրությունն իր հերթին նվաճեց Իրանի հյուսիսային որոշ երկրամասեր:
2) Արաբական խալիֆայության տարածքում լայնորեն տարածվեց զրադաշտականությունը:
3) Վերականգնվեց Հայաստանի լիակատար անկախությունը:
4) Իրանի բնակչության մեծ մասը հետզհետե ընդունեց իսլամը:

33 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ասորեստանի Սարգոն II արքայի զոհվելը Փոքր Ասիայում:
բ. Երուսաղեմի առաջին նվաճումը Նաբուգոդոնոսոր II-ի կողմից
գ. Բարդիայի ապստամբությունը Կամբիզի դեմ
դ. Թիգլաթպալասար I-ի թագավորության սկիզբը

1) բ, ա, դ, գ
2) ա, գ, դ, բ
3) դ, ա, բ, գ
4) դ, ա, գ, բ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նովգորոդի և Կիևի միավորումը Օլեգ իշխանի կողմից
բ. Կոմնինոսների կառավարման սկիզբը Բյուզանդիայում
գ. Աբասյան արքայատոհմի հիմնումը
դ. Սաքսոնիայի վերջնական նվաճումը Կարլոս Մեծի կողմից

1) դ, ա, գ, բ
2) գ, դ, ա, բ
3) գ, ա, դ, բ
4) ա, դ, բ, գ

35 **Ո՞ր երկրում է Ռեֆորմացիայի արդյունքում հաստատվել հետևյալ սկզբունքը. «Ում իշխանությունը, նրա էլ՝ հավատը»:**

1) Իտալիա
2) Ֆրանսիա
3) Անգլիա
4) Գերմանիա

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մարդն ամբողջովին պետք է ենթարկվի պետությանը, քանի որ մարդկային և հոգևոր ամեն ինչ կորցնում է իր արժեքը պետությունից դուրս»:**

1) Օ. Ֆոն Բիսմարկը
2) Բ. Մուսսոլինին
3) Ա. Հիտլերը
4) Ջ. Ջենտիլեն

37 **Պատմական գործիչներին համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերի հետ.**

1. Յահմոս I	ա. Ք.ա. 558-529 թթ.
2. Սալմանասար I	բ. Ք.ա. 1114-1076 թթ.
3. Քսերքսես I	գ. Ք.ա. 486-465 թթ.
4. Կյուրոս II	դ. Ք.ա. 1263-1234 թթ.
5. Թիգլաթպալասար I	ե. Ք.ա. 744-737 թթ.
	զ. Ք.ա. 1540-1517 թթ.

1) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ, 5-զ
2) 1-գ, 2-բ, 3-զ, 4-դ, 5-ա
3) 1-զ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-բ
4) 1-ե, 2-զ, 3-ա, 4-դ, 5-գ

38 **Կատարել համապատասխանեցում.**

1. Արևելքում խաչակիրների վերջին հենակետի անկումը	ա. 1209 թ.
	բ. 1215 թ.
2. ալբիգոյների դեմ խաչակրաց արշավանքի սկիզբը	գ. 1268 թ.
3. Կլերմոնի եկեղեցական ժողովը	դ. 1291 թ.
4. Ազատությունների մեծ հրովարտակի ընդունումը Հովհան Անհողինի կողմից	ե. 1095 թ.

1) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ
2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

39 **Ու՞մ է նվիրված 1000 թ. գրի առնված անգլոսաքսոնական վիպերգը.**

1) Ֆրանկների զորավար Ռոլանդին
2) Դանիայի թագավոր Բեովուլֆին
3) Ֆրանկների կայսր Կարլոս Մեծին
4) Դանիայի արքայազն Համլետին

40 **Ո՞ր քաղաքում է կայացել հիտլերյան հանցագործների դատավարությունը.**

1) Մյունխենում
2) Բեռլինում
3) Պոտսդամում
4) Նյուրնբերգում

41 **Ո՞րն էր Ռուսաստանում ծավալված սլավոնասերների շարժման գլխավոր հետևանքը.**

1) Կտրուկ բարձրացավ ռուսների ազգային ինքնագիտակցությունը, խորացավ վերջինիս մեծապետական բնույթը:
2) Ռուսաստանում լայնորեն տարածվեցին սոցիալ-ժողովրդավարական գաղափարները:
3) Կասեցվեց Ռուսաստանի արդիականացման գործընթացը:
4) Երկրում հաստատվեց սահմանադրական միապետություն:

42 **Ո՞րն է 1939թ. օգոստոսի 23-ին կնքված խորհրդա-գերմանական չհարձակման համաձայնագրի գլխավոր հետևանքը.**

1) ԽՍՀՄ-ին միացվեց Ֆինլադիան:
2) Սանձազերծվեց Երկրորդ աշխարհամարտը:
3) Ավստրիան, որպես ինքնուրույն պետություն, դադարեց գոյություն ունենալ:
4) Չեխոսլովակիայի տարածքներ տրվեցին Գերմանիային, Հունգարիային և Լեհաստանին:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սարգոն II-ի խոշոր արշավանքն Ուրարտու
բ. Կյուրոսի ներխուժումը Բաբելոնիա
գ. Ստորին Եգիպտոսի նվաճումը Կամբիզի կողմից
դ. Քաղդեացի Նաբոպալասարի թագադրվելը Բաբելոնիայի արքա

1) դ, բ, գ, ա
2) գ, ա, բ, դ
3) ա, դ, բ, գ
4) բ, դ, ա, գ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հուգենոտյան պատերազմների սկիզբը Ֆրանսիայում
բ. կայսր Կարլոս V-ի կողմից Ռայխստագի հրավիրումը Վորմսում
գ. պորտուգալացի ծովագնացների կողմից Բարեհուսո հրվանդանին հասնելը
դ. «Գերագահության մասին ակտի» ստորագրումը Անգլիայի արքա Հենրիխ VIII-ի կողմից

1) ա, գ, դ, բ
2) բ, ա, դ, գ
3) ա, դ, բ, գ
4) գ, բ, դ, ա

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բեռլինի պատի կառուցումը
բ. Ֆրանսիայի նախագահ Շարլ դը Գոլի հրաժարականը
գ. Մ. Թեթչերի առաջին անգամ վարչապետի պաշտոն ստանձնելը
դ. Ֆրանսիայի Չորրորդ Հանրապետության սկիզբը
ե. Ջ. Քենեդու ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը

1) դ, ե, ա, բ, գ
2) բ, ե, գ, դ, ա
3) գ, ե, բ, դ, ա
4) դ, ա, ե, գ, բ

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Տիբերիոս	ա. 161-180 թթ.
2. Վեսպասիանոս	բ. 14-37 թթ.
3. Դիոկղետիանոս	գ. 284-305 թթ.
4. Կլավդիոս	դ. 98-117 թթ.
5. Տրայանոս	ե. 41-54 թթ.
	զ. 69-79 թթ.

1) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
2) 1-բ, 2-դ, 3-զ, 4-գ, 5-ա
3) 1-բ, 2-զ, 3-գ, 4-ե, 5-դ
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ

47 **Կատարել համապատասխանեցում.**

1. Կուբայում ազատագրական պատերազմի բռնկումն ընդդեմ իսպանական լծի	ա. 1867 թ.
2. Երրորդ հանրապետության սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում	բ. 1861 թ.
3. ընտրական երկրորդ բարեփոխման ընդունումը Մեծ Բրիտանիայում	գ. 1875 թ.
4. Գերմանական կայսրության սահմանադրության հաստատումը	դ. 1895 թ.
5. Ճորտության վերացումը Ռուսաստանում	ե. 1871 թ.
	զ. 1863 թ.

1) 1-ե, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ
2) 1-ա, 2-զ, 3-բ, 4-դ, 5-գ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ
4) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ

48 **Կատարել համապատասխանեցում**

1. Զինադադարի կնքումը Կոմպիենյան անտառում	ա. 1916 թ.
2. Լոզանի պայմանագրի կնքումը	բ. 1918 թ.
3. Քառյակ միության ձևավորումը	գ. 1923 թ.
4. Խորհրդա-իրանական պայմանագիրը	դ. 1921 թ.
	ե. 1915 թ.

1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե
2) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
3) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-գ

49 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից	ա. 1935 թ.
2. Ռասայական օրենքների ընդունումը Գերմանիայում	բ. 1939 թ.
	գ. 1937 թ.
3. Տնտեսական մեծ ճգնաժամի ավարտը	դ. 1940 թ.
4. Նիդերլանդների, Բելգիայի և Լյուքսեմբուրգի գրավումը Գերմանիայի կողմից	ե. 1942 թ.
	զ. 1933 թ.
5. Խորհրդա-ֆիննական պատերազմի սկիզբը	

1) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-զ
2) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-ե
3) 1-ա, 2-գ, 3-զ, 4-դ, 5-բ
4) 1-գ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-բ

50 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Հարավային Օսիայի անկախության հռչակումը	ա. 1990թ.
2. Կոսովոյի անկախության ճանաչումը ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ երկրների կողմից	բ. 2008թ.
	գ. 1991թ.
3. Մարշալի պլանի գործադրումը ԱՄՆ-ի կողմից	դ. 1948-1951թթ.
4. Աբխազիայի անկախության հռչակումը	ե. 1998 թ.

1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե
4) 1-գ, 2-բ, 3-ե, 4-դ

Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Հռոմեական կայսրության կենտրոնը Բոսֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաք է տեղափոխել Կոստանդիանոս կայսրը:
2) Երկրորդ Պունիկյան պատերազմի հետևանքով Կարթագենը դադարեց Հռոմի մրցակիցը լինելուց:
3) Մակեդոնական երկրորդ պատերազմի շնորհիվ Հունաստանը վերականգնեց իր լիակատար անկախությունը:
4) Կոռնելիոս Սուլլայի դիկտատուրան հանրապետական կարգի ճգնաժամի առաջին լուրջ դրսևորումն էր Հռոմում:

52 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) «Երգ իմ Սիդի մասին» միջնադարյան վիպերգը նվիրվում է Դանիայի թագավոր Բեովուլֆին:
2) Ազատ արվեստները Եռյակ և Քառյակ մասերի են բաժանել VIդ. կրթական գործի կազմակերպիչներ Բոեցիոսն ու Կասիոդորը
3) 12 գրքից բաղկացած «Գոթերի պատմության» հեղինակն է Յորդանը:
4) Կարլոս Մեծի 778թ. Իսպանիա կատարած անհաջող արշավանքին է նվիրվում «Երգ Նիբելունգների մասին» վիպերգը:

53 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) 2002թ. մայիսի 14-ին որոշվեց ՀԱՊ-ը վերածել լիարժեք միջազգային կազմակերպության:
2) 1990թ. հունիսի 12-ին ընդունվեց Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագիրը:
3) 1991թ. նոյեմբերի 15-ին ԽՍՀՄ-ի Պետական խորհուրդը հաստատեց ԽՍՀՄ-ի փոխարեն Ինքնիշխան Պետությունների Միության ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը:
4) 1991թ. դեկտեմբերի 8-ին ստորագրվեց Բելովեժսկի համաձայնագիրը:

54 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. պերիոյկոսներ	ա. Պատմական բնույթի առաջին երկերի հեղինակները Հին Հունաստանում:
2. նոմարքոսներ	բ. Հռոմի Ծերակույտի վերնախավի անդամներ:
3. օպտիմատներ	գ. Սպարտական պետության սահմանամերձ շրջանների անձնապես ազատ բնակիչներ, որոնք, սակայն, զուրկ էին քաղաքացիական իրավունքներից:
4. լոգոգրափոսներ	դ. Փարավոնի կողմից տեղերում նշանակված պաշտոնյաներ Հին Եգիպտոսում:
	ե. Հին Հռոմում քրմական դասի ներկայացուցիչներ:

1) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ
2) 1-ե, 2-բ, 3-ա, 4-դ
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե
4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

55 **Տվյալ հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. Ազատությունների մեծ հրովարտակ
2. մուլք
3. գիլդիական դպրոց
4. վեչե
5. Հանզա

ա. եկեղեցու իրավասության ներքո գտնվող միջնադարյան դպրոց
բ. գերմանական և արևմտասլավոնական քաղաքների վաճառականների միություն
գ. մասնավոր սեփականություն համարվող հողեր
դ. 63 հոդվածներից կազմված միջնադարյան Սահմանադրություն
ե. Ժողովրդական ժողով սլավոնական ցեղերի մոտ
զ. եկեղեցու իրավասությունից դուրս գտնվող միջնադարյան դպրոց

1) 1-զ, 2-ա, 3-գ, 4-բ, 5-դ
2) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ե, 5-բ
3) 1-դ, 2-ե, 3-ա, 4-զ, 5-գ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-զ

56 **Տալ հասկաց ությունների բացատրությունները.**

1. «նոր ազատություն»
2. պրոտեկտորատ
3. պահպանողականություն
4. «Լուսավորության դար»
5. մանուֆակտուրային կապիտալիզմ

ա. Արդյունաբերական քաղաքակրթության առաջին փուլը,որին բնորոշ է նախասկզբնական կուտակումը:
բ. Մարդու բնական իրավունքի գաղափարների կողմնակիցների գործունեության դարաշրջանի ընդհանուր անվանումը:
գ. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը:
դ. Օ. Կրոմվելի կողմից միապետականների դեմ պայքարելու և բարեփոխումները պաշտպանելու համար ստեղծված կառավարման առանձնահատուկ ձև:
ե. Քաղաքական գաղափարախոսություն, որի կողմնակիցները դեմ էին հասարակության արմատական և արագ փոփոխություններին:
զ. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:

1) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-զ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
4) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

57 **Նշված փաստարկներից ընտրել երեքը, որոնք հանդիսանում են փարավոն Մինայի կողմից միասնական պետության ստեղծման հետևանք.**

ա. Եգիպտոսի պատմության մեջ սկսվեց Նոր թագավորության դարաշրջանը:
բ. Նոմերի միջև պատերազմները դադարեցին, տնտեսությունը վերականգնվեց:
գ. Նեղոսի դելտայի շրջանում կառուցվեց նոր մայրաքաղաքը՝ Մեմֆիսը:
դ. Անցկացվեցին կրոնական բարեփոխումներ, որոնք սահմանափակում էին Ամոնի տաճարի քրմության իրավունքները:
ե. Կազմակերպվեցին առաջին ռազմական արշավանքները Լիբիա, Նուբիա և Սինայի թերակղզի:

1) բ, գ, ե
2) ա, գ, դ
3) բ, դ, ե
4) ա, բ, դ

58 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են խաչակրաց արշավանքների հետևանք.**

ա. Աճեցին Արևելքի և Արևմուտքի միջև ընթացող ապրանքափոխանակության ծավալները, ինչը նպաստեց արհեստագործության զարգացմանը Եվրոպայում:
բ. Առաջացան և որպես ինքնավար միավորներ հանդես եկան միջնադարյան քաղաքները:
գ. Արևելքի երկրներում լայնորեն տարածվեցին Վաղ Վերածննդի գաղափարները:
դ. Եվրոպայում տարածվեցին մինչ այդ անծանոթ բազմաթիվ մշակաբույսեր:
ե. Միջերկրածովյան առևտրում բարձրացավ Վենետիկի և Ջենովայի դերակատարությունը:
զ. Եվրոպական երկրներում լայնորեն տարածվեցին իսլամը և մահմեդական մշակույթը:
է. Խորացան Արևելք-Արևմուտք և բյուզանդական ու հռոմեակաթոլիկական եկեղեցիների միջև առկա հակամարտությունները:

1) գ, ե, զ, է
2) բ, գ, դ, զ
3) ա, գ, դ, է
4) ա, դ, ե, է

59 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են ՄԱԿ-ի գլխավոր նպատակները.**

ա. Մարդու իրավունքների և ազատությունների խրախուսում և տարածում անկախ ռասայից, լեզվից ու կրոնից:
բ. Ագրեսիվ գործողությունների ճնշում:
գ. Անդամ պետությունների կողմից փոխադարձ օգնության ցուցաբերում միմյանց՝ ներառյալ զինված ուժերի կիրառումը:
դ. Տնտեսական, սոցիալական և հումանիտար բնույթի խնդիրների կարգավորում:
ե. Միջազգային բնույթի վիճելի խնդիրների կարգավորում խաղաղ եղանակով:
զ. Անդամ յուրաքանչյուր պետության ռազմական հզորության ամրապնդում:
է. Անդամ պետությունների համատեղ գործողություններ՝ նրանց քաղաքական անկախությանը և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում:

1) ա, դ, զ, է
2) ա, բ, գ, է
3) ա, բ, դ, ե
4) բ, գ, զ, է

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կինոսկեֆալեի ճակատամարտը
բ. Իսոսի ճակատամարտը
գ. Իսթմոսի ճակատամարտը Սպարտայի և Աքայան միության զորքերի միջև
դ. Աթենական նավատորմի արշավանքը Սիցիլիա
ե. Աթենքի «Երկար պարիսպների» քանդումը
զ. Պարսկական նավատորմի ջախջախումը Սալամին կղզու մոտ
է. Պիլոս քաղաքի գրավումն աթենացի զորավար Դեմոսթենեսի կողմից
ը. Կորնթոսի համահունական վեհաժողովը
թ. Արբելայի ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների միջև
ժ. Քսերքսես I Աքեմենյանի սպանությունը

1) դ, գ, ա, ե, բ, ժ, զ, է, թ, ը
2) գ, ե, զ, ա, ժ, բ, է, թ, դ, ը
3) զ, ժ, է, դ, ե, ը, բ, թ, ա, գ
4) թ, ա, բ, դ, ե, գ, է, ժ, ը, զ

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կոմնինոսների արքայատան կառավարման ավարտը Բյուզանդիայում
բ. Բարսեղ (Վասիլ) II-ի կառավարման ավարտը
գ. Կոսովոյի ճակատամարտը սերբական և թուրքական բանակների միջև
դ. Նիկեա քաղաքի գրավումը թուրքերի կողմից
ե. Կոստանդնուպոլսի ազատագրումը Միքայել VIII Պալեոլոգոսի կողմից

1) գ, ե, դ, ա, բ
2) բ, ա, ե, գ, դ
3) դ, բ, ե, ա, գ
4) բ, ա, ե, դ, գ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Առաջին 10-ը փոփոխությունները ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ
բ. հանրապետության հռչակումը Անգլիայում
գ. Պետրոս (Պյոտր) Մեծի կողմից կայսեր տիտղոսի ընդունումը
դ. Վիեննայի վեհաժողովի սկիզբը
ե. Ռուսաստանի 50 նահանգների ստեղծման մասին Եկատերինա II-ի օրենքը
զ. Ավստրիայի պարտությունը Պրուսիայի դեմ պատերազմում
է. Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության լուծարումը Նապոլեոն I-ի կողմից
ը. Օտտո Բիսմարկի նշանակվելը Պրուսիայի առաջին նախարար
թ. Հռոմի հռչակվելը Իտալիայի մայրաքաղաք
ժ. Բուրբոնների տիրապետության դեմ ֆրանսիական հեղափոխությունը

1) թ, գ, ա, դ, ե, բ, ժ, ը, զ, է
2) ա, դ, գ, բ, ը, զ, ե, ժ, թ, է
3) դ, ա, գ, ե, բ, է, ը, զ, ժ, թ
4) բ, գ, ե, ա, է, դ, ժ, ը, զ, թ

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.«Ձեր ոչխարները խժռում են մարդկանց»:**

1) Կամպանելլա
2) Ֆրանսուա Ռաբլեն
3) Էրազմ Ռոտերդամցին
4) Թոմաս Մորը

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.«Նա, ով կառուցում է գործարան, տաճար է կառուցում»:**

1) Թ. Քարվերը
2) Ու. Չերչիլը
3) Ք. Քուլիջը
4) Ֆ. Ռուզվելտը

65 **Կատարել համապատասխանեցում.**

1. Առաջին անգամ Պերիկլեսի ընտրվելը Աթենքի բարձրագույն գործադիր պաշտոնյա
2. Հռոմի կողմից Մակեդոնիայի արքա Պերսևսին պատերազմի հայտարարումը
3. Պիլոս քաղաքի գրավումը աթենացի զորավար Դեմոսթենեսի կողմից
4. Աթենքի դեսպան Կալիասի և Աքեմենյան արքայի միջև հաշտության պայմանագրի կնքումը Շոշում

ա. Ք.ա. 425 թ.
բ. Ք.ա. 271 թ.
գ. Ք.ա. 443 թ.
դ. Ք.ա. 449 թ.
ե. Ք.ա. 171 թ.

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
3) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
4) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ

66 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի հետ.**

1. «Օթելլո»
2. «Սիքստինյան Տիրամայրը»
3. «Տիրակալը»
4. «Խորհրդավոր ընթրիք»

ա. Մաքիավելի
բ. Լեոնարդո դա Վինչի
գ. Ուիլյամ Շեքսպիր
դ. Ռաֆայել Սանտի
ե. Ռուբենս

1) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե
4) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ

67 **Նշված փաստերից ընտրել չորսը, որոնք վերաբերում են Մարտին Լյութերի տեսակետներին.**

ա. Հռոմի պապն իրավունք չունի մեղքերին թողություն տալու, քանի որ դրանք պետք է քավել ոչ թե թուղթ գրելով, այլ տանջանքներով:
բ. Հռոմի պապի գերագահությունը պետք է տարածվի ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությունների վրա:
գ. Հռոմի պապը չպիտի խառնվի աշխարհիկ իշխանության գործերին, իսկ եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը:
դ. Հավատքի միակ աղբյուրը Աստվածաշունչն է:
ե. Սուրբ Գիրքը պետք է կարդան և մեկնաբանեն միայն կաթոլիկ հոգևորականները:
զ. Աստվածաշնչում տեղ գտած սկզբունքներին հետևող հավատացյալները կարող են հասնել փրկության առանց եկեղեցու միջնորդության:
է. Աստվածաշնչի դրույթներին հավասար հավատքի աղբյուր են հանդիսանում նաև տիեզերական ժողովների կանոնները և պապերի որոշումները:

1) գ, դ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, ե, է
4) ա, բ, դ, զ

68 **Նշված փաստարկներից ընտրել չորսը, որոնք վերաբերում են Ասորեստանի Թիգլաթպալասար III-ի գահակալման ժամանակաշրջանին.**

ա. Բաբելացիների անկախության համար մղվող երկարատև պայքարը հարկադրեց Թիգլաթպալասարին անկախություն շնորհել Բաբելոնին:
բ. Ասորեստանի արքան ստեղծեց մշտական արհեստավարժ բանակ:
գ. Արևմուտքում ասորեստանյան արքան եգիպտացիներին զիջեց Կարքեմիշ քաղաքը Եփրատի ափին:
դ. Ասորեստանյան բանակը նվաճեց Եգիպտոսը, իսկ Թիգլաթպալասար III-ը հռչակվեց փարավոն:
ե. Ծանր պարտության մատնելով ուրարտացիներին՝ Թիգլաթպալասար III-ը նվաճեց Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող մի շարք երկրներ:
զ. Արևմուտքում ասորեստանցիները նվաճեցին փյունիկյան ծովափն ու Պաղեստինը՝ հասնելով Եգիպտոսի սահմաններին:
է. Երկարատև պատերազմից հետո Թիգլաթպալասար III-ն Ուրարտական տերությանը զիջեց իր թագավորության հյուսիսային որոշ մարզեր:
ը. Հարավում Թիգլաթպալասար III-ը նվաճեց Բաբելոնը և հռչակվեց բաբելոնյան արքա:

1) բ, ե, զ, ը
2) ա, դ, զ, է
3) բ, դ, ե, ը
4) գ, դ, է, ը

69 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք տեղ են գտել ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումանի 1947թ. Կոնգրեսին հղված ուղերձում.**

ա. Մեծածավալ տնտեսական օգնություն տրամադրել եվրոպական երկրներին:
բ. Ստեղծել արևմտյան երկրների ռազմաքաղաքական խմբավորում՝ ԱՄՆ-ի հովանու ներքո:
գ. ԽՍՀՄ-ի դեմ օգտագործել ատոմային զենքի սպառնալիք, նույնիսկ՝ կիրառել այն:
դ. ԽՍՀՄ-ի սահմանագծի երկայնքով տեղակայել ամերիկյան ռազմակայաններ:
ե. Միավորել ամբողջ անգլոսաքսոնական աշխարհի ուժերը:
զ. Անհրաժեշտության դեպքում ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների դեմ կիրառել զինված ուժեր:
է. Եվրոպայի վրա իջել է երկաթե վարագույրը, իսկ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետություններն ու ժողովուրդները ընկել են«Մոսկվայի վերահսկողության տակ»:

1) գ, դ, ե, զ
2) ա, գ, դ, է
3) բ, դ, ե, է
4) ա, բ, դ, զ

70 **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. էվպատրիդ
2. մեծ պոնտիֆեքս
3. ֆիլ
4. արեոպագոս
5. պոլիս
6. պրինցիպատ

ա. Հինհունական քաղաք-պետություն:
բ. Ավագների խորհուրդ Հին Աթենքում:
գ. Կայսր Դիոկղետիանոսի կողմից հիմնված կառավարման ձև:
դ. Տոհմային ավագանու ներկայացուցիչ Հին Աթենքում:
ե. Օգոստոս կայսեր կողմից ստեղծված կառավարման համակարգ Վաղ կայսրության ժամանակաշրջանում:
զ. Սոլոնի բարեփոխությունների արդյունքում ստեղծված տարածքային միավոր Հին Աթենքում:
է. Հին Հռոմի հոգևոր առաջնորդ, քրմապետ:

1) 1-է, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ, 6-ա
2) 1-զ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա, 6-բ
3) 1-դ, 2-է, 3-զ, 4-բ, 5-ա, 6-ե
4) 1-դ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-գ, 6-է

71 **Նշված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բացարձակ միապետություն
2. պահպանողականություն
3. սահմանադրական միապետություն
4. «նոր ազգայնականություն»
5. ավտորիտար կառավարում

ա. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:
բ. XVII-XVIII դդ. հեղափոխության և լուսավորականության հակազդեցությամբ ձևավորված քաղաքական գաղափարախոսություն:
գ. Կառավարման ձև, երբ միապետի անձնական իշխանությունը ոչնչով չի սահմանափակվում:
դ. Կառավարման ձև, երբ հասարակությունը պետք է ենթարկվի պետության ղեկավարի կամքին:
ե. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը:
զ. Կառավարման ձև, երբ սահմանափակվում են միապետի իշխանությունն ու իրավունքները:

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա
3) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ե, 5-դ
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-զ

72 **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. «Հակակոմինտերնյան պակտ»
2. «Բեռլին –Հռոմ առանցք»
3. Կոմունիստական Ինտերնացիոնալ
4. Հակահիտլերյան կոալիցիա
5. «Հռենոսի ապառազմականացված գոտի»

ա. տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն
բ. Գերմանիայի և Ճապոնիայի միջև 1936թ. նոյեմբերի 25-ին Բեռլինում կնքված պայմանագիր
գ. Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պայքարող պետությունների ու ժողովուրդների միություն
դ. Վերսալյան պայմանագրով որոշված գոտի Գերմանիայի տարածքում
ե. Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային-ազատագրական, հակաֆաշիստական շարժում
զ. 1936թ. ձևավորված գերմանա-իտալական խմբավորում

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե, 5-դ
2) 1-բ, 2-զ, 3-ա, 4-գ, 5-դ
3) 1-զ, 2-բ, 3-ե, 4-դ, 5-գ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ

73 **Նշված փաստարկներից ընտրել հինգը, որոնք հանդիսանում են Իվան IV Ահեղի գործունեության հետևանք.**

ա. Վերջնականապես տապալվեց Ոսկե Հորդայի տիրապետությունը:
բ. Հրավիրվեց ռուսական դասային ներկայացուցչական առաջին ժողովը:
գ. Ստեղծվեցին կառավարման համապետական մարմինները՝ պրիկազները:
դ. Ռուսական պետությանը միացվեցին Մերձբալթիկան, Լեհաստանը և Ուկրաինան:
ե. Մտցվեց զինվորական ծառայության նոր կարգ:
զ. Ռուսական եկեղեցին դարձավ ինքնուրույն՝ չենթարկվելով Կոստանդնուպոլսի պատրիարքին:
է. Ղրիմի խանությունը ենթարկվեց Ռուսական պետությանը:
ը. Ռուսական պետությանը միացվեցին Կազանը, Աստրախանը և Արևմտյան Սիբիրը:

1) գ, ե, զ, է, ը
2) բ, գ, ե, զ, ը
3) ա, գ, դ, ե, զ
4) ա, բ, դ, ե, է

74 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Վերսալյան պայմանագրի հետևանք.**

ա. Գերմանիան կորցրեց Էլզասն ու Լոթարինգիան:
բ. Սաարի ածխաավազանի շրջանը 10 տարով դրվեց Ֆրանսիայի վերահսկողության ներքո:
գ. Հռենոսի գոտին հայտարարվեց ապառազմականացված:
դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:
ե. Գերմանիան կորցրեց իր տարածքի 1/5 մասը:
զ. Դանցիգը(Գդանսկ) ստացավ ազատ քաղաքի կարգավիճակ:
է. Գերմանիայի բանակը չպետք է գերազանցեր 150 հազարը:

1) ա, գ, դ, զ
2) ա, բ, զ, է
3) բ, դ, ե, զ
4) գ, դ, զ, է

75 **Նշված իրադարձություններից որո՞նք են խախտում ժամանակագրական հաջորդականությունը.**

ա. Բաբելոնի գրավումը Թիգլաթպալասար III-ի կողմից:
բ. Սամարիայի գրավումը Սարգոն II-ի կողմից:
գ. Նաբոպալասարի թագադրվելը որպես Բաբելոնիայի արքա:
դ. Սարգոն II-ի արշավանքն Ուրարտու:
ե. Երուսաղեմի երկրորդ գրավումը Նաբուգոդոնոսոր II-ի կողմից:
զ. Ստորին Եգիպտոսի նվաճումը պարսիկների կողմից:
է. Կյուրոս II-ի զոհվելը մասագետների դեմ պատերազմում:
ը. Քսերքսես I-ի գահակալման սկիզբը:
թ. Հունական նավատորմի հաղթանակը Միկալե հրվանդանի մոտ:
ժ. Հույն-պարսկական պատերազմների ավարտը:

1) բ, ը
2) դ, թ
3) ե, զ
4) գ, զ

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բեռլինի պատի փլուզումը:
բ. Ժ. Շիրակի նախագահության ավարտը:
գ. Հանրապետության օգտին հանրաքվեի անցկացումն Իտալիայում:
դ. Ալժիրում սպայության կողմից խռովության բարձրացումը:
ե. Երկրորդ անգամ վարչապետի պաշտոնի ստանձնումը Մ. Թեթչերի կողմից
զ. ԳԺՀ-ի և ԳԴՀ-ի միացումը:
է. Կարիբյան ճգնաժամը:
ը. Ֆոլկլենդյան պատերազմը:
թ. Ռ. Ռեյգանի ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը:
ժ. Շենգենյան համաձայնագրի կնքումը:

1) ը, ե, զ, բ, է, ժ, դ, ա, գ, թ
2) ե, զ, ժ, է, բ, ա, ը, դ, թ, գ
3) գ, դ, է, թ, ը, ե, ա, զ, ժ, բ
4) ա, ժ, թ, դ, ե, գ, բ, ը, զ, է

77 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Գործիչը	#	Տարեթիվը
1.	Պայմանագրի կնքումը Հռոմի և Սելևկյանների միջև	1.	Դիոկղետիանոս	1.	Ք.հ. 476 թ.
2.	Պիլոս քաղաքի գրավումն աթենացիների կողմից	2.	Ալեքսանդր Մակեդոնացի	2.	Ք.ա. 188 թ.
3.	Դոմինատի սկիզբը	3.	Դեմոսթենես	3.	Ք.ա. 425 թ.
4.	Գրանիկոսի ճակատամարտը	4.	Օդոակր	4.	Ք.հ. 284 թ.
5.	Վերջին հռոմեական կայսեր գահընկեցությունը	5.	Անտիոքոս III	5.	Ք.ա. 334 թ.

1

1	3	4
2	1	5
3	2	3
4	5	1
5	4	2

2

1	5	2
2	3	3
3	1	4
4	2	5
5	4	1

3

1	2	5
2	1	3
3	5	4
4	3	1
5	4	2

4

1	4	3
2	2	4
3	3	5
4	1	2
5	5	1

78 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Վայրը	#	Գործիչը
1.	Լյութերին գաղափարներից հրաժարեցնելու համար հրավիրված Ռայխստագը	1.	1242 թ.	1.	Նանտ	1.	Ալեքսանդր Նևսկի
2.	հուգենոտներին դավանանքի ազատություն շնորհող էդիկտը	2.	1055 թ.	2.	Բաղդադ	2.	Կարլոս V
3.	ճակատամարտը Նովգորոդի և գերմանացի խաչակիրների զորքերի միջև	3.	1521 թ.	3.	Վորմս	3.	Հենրիխ IV Բուրբոն
4.	թյուրք-սելջուկների տերության առաջացումը	4.	1598 թ.	4.	Չուդ լիճ	4.	Տուղրիլ բեկ

1

1	1	4	2
2	3	1	3
3	4	2	1
4	2	3	4

2

1	3	3	2
2	4	1	3
3	1	4	1
4	2	2	4

3

1	2	4	1
2	4	3	2
3	1	2	4
4	3	1	3

4

1	4	2	3
2	3	4	4
3	1	3	2
4	2	1	1

79 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակին.**

1. «Մարիա Մագդաղենացի»
2. «Ֆրանկների պատմությունը»
3. «Դեկամերոն»
4. «Վենեցիայի ծնունդը»
5. «Գոթերի պատմությունը»

ա. Ջովաննի Բոկաչչո
բ. Կասիոդոր
գ. Դոնաթելլո
դ. Գրիգորիոս Տուրացի
ե. Ս. Բոտիչելլի
զ. Ֆ. Բրունելեսկի

1) 1-զ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-զ, 3-բ, 4-գ, 5-դ
4) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

80 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը	#	Վայրը
1.	Կարիբյան ճգնաժամը	1.	1974 թ.	1.	Ու. Չերչիլ	1.	Կուբա
2.	Ուոթրգեյթյան գործը	2.	1982 թ.	2.	Ռ. Նիքսոն	2.	Ֆուլտոն
3.	Սառը պատերազմի սկիզբը	3.	1962 թ.	3.	Մ. Թեթչեր	3.	Ատլանտյան օվկիանոս
4.	Ֆոլկլենդյան պատերազմը	4.	1946 թ.	4.	Ռ. Քենեդի	4.	Վաշինգտոն

1

1	3	4	4
2	1	2	3
3	2	1	1
4	4	3	2

2

1	2	4	3
2	1	2	2
3	4	3	1
4	3	1	4

3

1	3	4	1
2	1	2	4
3	4	1	2
4	2	3	3

4

1	3	3	2
2	1	4	4
3	4	2	1
4	2	1	3